


# ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՈՒՄԻ



**ВЕСТНИК**

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО  
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

**MESSENGER**

OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2021 [4]  
ԵՐԵՎԱՆ



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

#### **ՄԱՆՈՒԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետի դեկան,  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

#### **ՌՈՒԲԵՆ ՂԱՆԹԱՐՉՅԱՆ**

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու

#### **ՆԱՐԵԿ ԿԵՍՈՅԱՆ**

ՀՊՏՀ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկան,  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

#### **ԼՈՒՍԻՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՀՊՏՀ բիզնես վարչարարության ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու

#### **ՏԱՃԱՏ ՊԱՊՈՅԱՆ**

ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի մագիստրանտ

#### **ԳՈՌ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀՊՏՀ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական  
համակարգերի ամբիոնի մագիստրանտ

### **ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԾԵՐԱՑՄԱՆ**

### **ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

### **ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ**

### **ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ**

### **ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ՀՀ-ում ժողովրդագրական ծերացման ֆենոմենը սկսվել է 20-րդ դարի վերջերից և շարունակում է ունենալ աճի միտում: 2018 թ. սկսած՝ մեր հանրապետությունը դասվում է ժողովրդագրական ծերացման շարժարժ մակարդակ ունեցող երկրների շարքին:

Ժողովրդագրական ծերացման հիմնահարցի վերաբերյալ արտասահմանյան և հայրենական գիտնականների հետազոտությունները, ինչպես նաև հեղինակների ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ ժողովրդագրական ծերացման բարձր մակարդակն առաջացնում է նաև ազգային անվտանգության հիմնախնդիր: Բացի այդ, ծերացման գործընթացը նշանակալի ազդեցություն ունի տնտեսական, սոցիալական մի շարք ոլորտների վրա: Այս համալրեքստում, հորվածում վերլուծվել են ՀՀ ժողովրդագրական գործընթացների փոփոխությունները, բնակչության ծերացման առկա վիճակը, բացահայտվել են դրա վրա ազդող գործոնները, ինչպես նաև քննարկվել են ծերացման հետևանքները:

Հետազոտության արդյունքները փաստում են, որ ՀՀ-ում ժողովրդագրական ծերացման հիմնական պատճառը ոչ միայն ծնելիության մակարդակի նվազումն է, այլև մեծ չափերի հասնող արտագաղթը:

**Հիմնաբառեր.** ժողովրդագրական գործընթացներ, ծնելիության նվազում, ընդհանուր մահացության գործակից, արտագաղթ, ծերացում, փարիքային կառուցվածքի փոփոխություն, մեդիանական փարիք

JEL: J11, R23

DOI: 10.52174/1829-0280\_2021\_4\_95

**Ներածություն:** Պետության սոցիալ-տնտեսական զարգացման համար կարևոր նշանակություն ունի ժողովրդագրական իրավիճակը: Ցանկացած տնտեսական համակարգ անքակտելիորեն կապված է ժողովրդագրության հետ: Բնակչության թվաքանակի և սեռատարիքային կառուցվածքի փոփոխություններն ուղղակիորեն ազդում են հասարակական կյանքի բոլոր ոլորտների զարգացման տեմպերի վրա:

Աշխարհում տեղի ունեցող ժողովրդագրական փոփոխությունները նոր մարտահրավերներ են ծնել գրեթե բոլոր երկրների համար: Ծնելիության անկումը, միջազգային միգրացիայի և կյանքի սպասվող տևողության աճը վերջին մի քանի տասնամյակների ընթացքում դրամատիկ ազդեցություն են ունեցել բնակչության տարիքային կառուցվածքի վրա, և զլոբալ մակարդակով նշանակալի է դարձել ժողովրդագրական ծերացման աճի միտումը:

ՀՀ ժողովրդագրական իրավիճակի առկա հիմնախնդիրներից է բնակչության ժողովրդագրական ծերացումը, որի ընթացքը հանրապետությունում հետխորհրդային տարիներին մեծապես արագացել է: Բնակչության ծերացումը կամ ժողովրդագրական ծերացումը երկարատև ժողովրդագրական փոփոխությունների, բնակչության վերարտադրության, ծնելիության, մահացության և դրանց հարաբերակցություններում տեղ գտած տեղաշարժերի, ինչպես նաև միգրացիայի հետևանք է:

Սույն հետազոտության նպատակն է գնահատել ու վերլուծել ՀՀ ժողովրդագրական ծերացման մակարդակներն ըստ Երևան քաղաքի և մարզերի, բացահայտել բնակչության ծերացման վրա ազդող գործոնները, ինչպես նաև իրականացնել ծերացման հետևանքների խմբավորում:

**Գրականության ակնարկ:** Աշխարհում 19-րդ դարի սկզբին մարդկության պատմության մեջ առաջին անգամ բնակչությունը հատեց 1 միլիարդի սահմանը, իսկ 20-րդ դարում բնակչության աճը հասավ աննախադեպ ցուցա-

նիշների՝ 1920 թ. կազմելով 2 մլրդ, իսկ 1999 թ.՝ 6 մլրդ<sup>1</sup>: Ներկայումս բնակչության թիվը հասել է շուրջ 7.9 միլիարդի: Սակայն պետք է նշել, որ 21-րդ դարում աշխարհի բնակչության թվի տարեկան աճի տեմպը նվազել է՝ կազմելով 1.2-1.3% (մինչև 1990 թ. տատանվել է 1.8–2%-ի սահմանում, որից հետո սկսել է կայուն կերպով նվազել)<sup>2</sup>:

Աշխարհի բնակչության թվի աճի դանդաղման ու ծնելիության նվազման միտումները, մահացության կրճատման հետ մեկտեղ, պայմանավորված են նաև տնտեսական աճի մեջ գիտատեխնիկական առաջընթացի դերի բարձրացմամբ, տնտեսության ակտիվ կազմի մեջ կանանց ինտենսիվ ներգրավվածությամբ և մարդկային կապիտալում կատարվող ծախսերի աճով<sup>3</sup>: Ըստ ՄԱԿ-ի հրապարակման՝ 2019 թ. արձանագրվել է, որ աշխարհում 65 և բարձր տարիքի անձանց թիվը կազմել է 703 մլն մարդ: Կանխատեսվում է, որ այդ ցուցանիշը կկրկնապատկվի և 2050 թ. կհասնի 1.5 միլիարդի<sup>4</sup>: Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ աշխարհի բնակչությունը ծերանում է: «Ծերացած» բնակչությունը պատմական զարգացման արդյունք է և հատուկ է զարգացած երկրներին, երբ բնակչությունը մինչև 65–70 տարեկանում ցածր մահացության պայմաններում թևակոխում է «ծեր» տարիք՝ ավելացնելով ծերացածների թիվը և մահացությունը՝ վերջիններիս հաշվին<sup>5</sup>: Համաձայն ՄԱԿ-ի «Զարգացում ծերացող աշխարհում» համաշխարհային տնտեսական և սոցիալական հետազոտություն - 2007 թ. հրապարակման՝ ժողովրդագրական ծերացման գործընթացում առանձնացվում է երեք փուլ<sup>6</sup> .

Առաջին փուլում կյանքի սպասվող տևողությունն աճում է, սակայն բնակչությունը երիտասարդանում է՝ ի հաշիվ երեխաների և մանկական մահացության անկման առաջանցիկ տեմպերի: Այս փուլում տարիքային կառուցվածքի փոփոխությունները նշանակալի չեն:

Երկրորդ փուլում, երբ սկսվում է ծնելիության անկումը, տարիքային կառուցվածքը տեղաշարժվում է դեպի բարձր տարիք, ինչը հանգեցնում է բնակչության մեջ երեխաների մասնաբաժնի նվազման և տարեցների տեսակարար կշռի ավելացման, ընդ որում՝ տարեցների մասնաբաժնի ավելացումը տեղի է ունենում առաջանցիկ տեմպերով: Ծնելիության շարունակական անկումը հանգեցնում է տարիքային կառուցվածքի հիմնարար տեղաշարժի՝ խախտելով սեռատարիքային բուրգի հիմքերը և բրգաձևությունը:

Ժողովրդագրական ծերացման երրորդ փուլում (ծնելիության և մահացության երկարատև նվազումից հետո) երեխաների և աշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինները նվազում են, իսկ տարեցներինը՝ ավել-

<sup>1</sup> Տե՛ս **Bavel J. Van**, The world population explosion: causes, backgrounds and projections for the future, 5(4), 2013, էջ 281–291, <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3987379/>

<sup>2</sup> Տե՛ս [https://countrymeters.info/ru/World#death\\_clock](https://countrymeters.info/ru/World#death_clock)

<sup>3</sup> Տե՛ս **Հախվերդյան Դ., Փախյան Ա.**, Համաշխարհային տնտեսության ժողովրդագրական հիմքերը. գլոբալ ծերացում, «21-րդ դար», 6 (58), 2014, էջ 109:

<sup>4</sup> Տե՛ս World Population Ageing 2019 Highlights, UN, New York, 2020, էջ 5:

<sup>5</sup> Տե՛ս **Խոջաբեկյան Վ., Գալստյան Ա., Փափազյան Խ., Պետրոսյան Մ.**, Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում, «21-րդ դար», 2 (16), 2007, էջ 120:

<sup>6</sup> Տե՛ս World economic and social survey 2007, Development in an ageing world, United Nations 2007, [https://www.un.org/en/development/desa/policy/wess/wess\\_archive/2007wess.pdf](https://www.un.org/en/development/desa/policy/wess/wess_archive/2007wess.pdf), An ageing world population, էջ V:

լանում: Վերոնշյալ փուլում կյանքի սպասվող տևողության բարձրացումը դառնում է բնակչության ծերացման ամենակարևոր գործոնը:

Գ. Մարոիզան, Ա. Բելանգերը և Վ. Լուտցը «Բնակչության ծերացում, միգրացիա և արտադրողականություն» գիտական հոդվածում քննարկել են ԵՄ անդամ 28 երկրի բնակչության ծերացման ցուցանիշները, իրականացրել կանխատեսումներ, ինչպես նաև մատնանշել, որ տնտեսության վրա բնակչության ծերացման բացասական հետևանքների ազդեցությունը հնարավոր է մեղմել միգրացիայի ծավալների և աշխատուժի մասնակցության աստիճանի փոփոխության միջոցով<sup>7</sup>:

Ա. Ֆիգիյուոլին, Վ. Ֆլամինին, Վ. Մովաթը և այլք «Աճող ցավեր. պատրաստ է Լատինական Ամերիկան բնակչության ծերացմանը» գիտական աշխատությունում գնահատել են Լատինական Ամերիկայի երկրների ժողովրդագրական ծերացման ֆինանսական ծախսերը, քննարկել են ծերացման հետևանքների ազդեցությունը հարկաբյուջետային կայունության, պետական կենսաթոշակային և առողջապահական համակարգերի վրա<sup>8</sup>:

Ա. Գիտել-Բաստենիդը, Ս. Ջորգուլի Սաուչեդոն, Ս. Շերբովը չափել են Կենտրոնական և Հարավային Ամերիկայի բնակչության ծերացման մակարդակը՝ կիրառելով այլընտրանքային ցուցանիշ՝ տարեցների կախվածության հեռանկարային գործակից<sup>9</sup>:

Դ. Բլումը «Ժողովրդագրական ցնցումներ» հոդվածում քննարկել է ժողովրդագրական գործընթացների փոփոխությունները գլոբալ մակարդակով, ինչպես նաև վեր է հանել ծերացման բացասական ազդեցությունները տնտեսական աճի, բյուջեի կայունության, անվտանգության և բնակչության կենսամակարդակի վրա<sup>10</sup>:

Ժողովրդագրական ծերացման հիմնախնդիրների վերաբերյալ մանրազնին հետազոտություններ, վիճակագրական հրապարակումներ, կանխատեսումներ են իրականացնում ՄԱԿ-ը, ԱՄԿ-ն, Համաշխարհային բանկը, ՏՀԶԿ-ն և մի շարք այլ միջազգային կառույցներ:

ՀՀ վիճակագրական կոմիտեն 2007 թ-ից հրապարակում է ընդհանուր ժողովրդագրական խնամառության գործակիցը, իսկ 2017 թ-ից սկսած՝ երիտասարդների, տարեցների ժողովրդագրական խնամառության, ինչպես նաև ծերացման գործակիցները<sup>11</sup>:

<sup>7</sup> Stéu **Marois G., Bélanger A. and Lutz W.**, Population aging, migration, and productivity in Europe, Proc Natl Acad Sci U S A. 2020 Apr 7; 117(14): 7539–7541. Published online 2020 Apr 7. doi: 10.1073/iti1420117 www.pnas.org/cgi/doi/10.1073/pnas.1918988117

<sup>8</sup> Stéu **Figliuoli L., Flamini V., Mowatt R.** and others, Growing pains: Is Latin America prepared for population aging, International Monetary Fund 2018, <https://www.imf.org/en/Publications/Departmental-Papers-Policy-Papers/Issues/2018/04/16/Growing-Pains-Is-Latin-American-Prepared-for-Population-Aging-45382>, 195 էջ:

<sup>9</sup> Stéu **Gietel-Basten S., Giorguli Saucedo S., Scherbov S.**, Prospective measures of aging for Central and South America, **Citation:** Gietel-Basten S, Saucedo SEG, Scherbov S. (2020) Prospective measures of aging for Central and South America. PLoS ONE 15(7): e0236280. <https://doi.org/10.1371/journal.pone.0236280>

<sup>10</sup> Stéu **Блум Д.**, Демографические потрясения; Финансы и Развитие, Март, 2016, <https://www.imf.org/external/russian/pubs/ft/fandd/2016/03/pdf/bloom.pdf>, էջ 6-11:

<sup>11</sup> Stéu ՀՀ ժողովրդագրական ժողովածու - 2017, ՀՀ ԱՎԾ, Եր., 2017, էջ 36:

Ժողովրդագրական ծերացման հիմնախնդիրները գտնվում են նաև հայազգի գիտնականների, հետազոտողների ուշադրության կենտրոնում (Վ. Խոջաբեկյան, Ռ. Եգանյան, Դ. Հախվերդյան, Մ. Ֆահրադյան, Ս. Մանուկյան, Ս. Կարապետյան և այլք):

«Ը ժողովրդագրական գործընթացների վերաբերյալ գիտական բազմաթիվ աշխատություններ ունի ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանը: «Ը-ում բնակչության ծերացման գործընթացը, դրա վրա ազդող գործոնները, «ծեր» և «ծերացած» բնակչություն հասկացությունների վերաբերյալ բազմաթիվ հեղինակների տեսակետները քննարկվել ու վերլուծվել են Վ. Խոջաբեկյանի «Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում» գիտական հոդվածում<sup>12</sup>:

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դ. Հախվերդյանի «Համաշխարհային տնտեսության ժողովրդագրական հիմքերը. գլոբալ ծերացում» վերտառությամբ գիտական հոդվածում քննարկվել են ժողովրդագրական ծերացման միտումները գլոբալ մակարդակով, վերլուծվել է համաշխարհային տնտեսության զարգացման վրա բնակչության ծերացման գործոնի ազդեցությունը, ինչպես նաև վեր են հանվել «Ը ժողովրդագրական ծերացման մարտահրավերները<sup>13</sup>:

Ժողովրդագրական անվտանգության հիմնահարցերը վերլուծվել են պրոֆեսոր Մ. Ֆահրադյանի «Ժողովրդագրական անվտանգության գնահատման վիճակագրական ցուցանիշների համակարգը և դրա կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտական հոդվածում<sup>14</sup>: Հեղինակը կարևորել է ժողովրդագրական անվտանգության գնահատման ժամանակ վիճակագրական ցուցանիշների համակարգի կիրառումը, իսկ բնակչության ծերացումը համարել է ազգային անվտանգության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը:

Այսպիսով՝ միջազգային և հայրենական գրականության ուսումնասիրությունից կարելի է փաստել, որ ժողովրդագրական ծերացման հիմնախնդիրն արդիական է բազմաթիվ երկրներում, սակայն յուրաքանչյուրում՝ ինչպես ծերացման խորությունը և սրությունը, այնպես էլ դրա հետևանքները դրսևորվում և դիտարկվում են յուրովի:

**Հետազոտության մեթոդաբանություն:** «Ը բնակչության ծերացման հիմնախնդիրները ժողովրդագրական գործընթացների փոփոխության համատեքստում ուսումնասիրությունն ուղեկցվել է հայրենական և միջազգային մասնագիտական գրականության ուսումնասիրությամբ և վերլուծությամբ, ժողովրդագրական ծերացման ցուցանիշների հաշվարկման ընդունված մեթոդաբանության դիտարկմամբ: Ժողովրդագրական ծերացման գնահատման համար կիրառելի են երկու տեսակի ցուցանիշներ՝ հիմնված հետահա-

<sup>12</sup> Տե՛ս Խոջաբեկյան Վ., Գալստյան Ա., Փափազյան Խ., Պետրոսյան Մ., նշվ. աշխ., էջ 117-137:

<sup>13</sup> Տե՛ս Հախվերդյան Դ., Փախյան Ա., նշվ. աշխ., էջ 107-125,

[http://www.noravank.am/upload/pdf/7.David\\_Hakhverdyan\\_Anna\\_Pakhlyan\\_21\\_DAR\\_06\\_2014.pdf](http://www.noravank.am/upload/pdf/7.David_Hakhverdyan_Anna_Pakhlyan_21_DAR_06_2014.pdf)

<sup>14</sup> Տե՛ս Ֆահրադյան Մ., Ժողովրդագրական անվտանգության գնահատման վիճակագրական ցուցանիշների համակարգը և դրա կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, «Բանբեր ՀՊՏՀ», 3, 2017, էջ 83-92,

[https://asue.am/upload/files/science/banber/2017-year-3/10-B\\_2017.3-9.pdf](https://asue.am/upload/files/science/banber/2017-year-3/10-B_2017.3-9.pdf)

յաց (ժամանակագրական) տարիքի հայեցակարգի վրա<sup>15</sup>:

Առաջին տեսակի ցուցանիշներից է տարեց անձանց մասնաբաժինն ընդհանուր բնակչության թվաքանակում կամ առանձին տարիքային խմբում:

Ներկայումս ԵՄ-ն և ՏՀԶԿ-ն ծերացման չափման համար (որպես սահմանային տարիք) կիրառում են 65 տարեկանը, իսկ ՄԱԿ-ը՝ և՛ 65 տարեկանը, և՛ 60-ը: Վերոնշյալի համատեքստում՝ մասնագիտական գրականության մեջ ծերացման փուլերի ու մակարդակների որոշման համար ներկայացված են ժողովրդագրական ծերացման բազմաթիվ սանդղակներ, որոնցից առավել հայտնի է Ժ. Բ. Գարնյե - Է. Ռոսեթի սանդղակը:

ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի հաշվարկման մեթոդաբանությունը հարմարեցված է գլոբալ մակարդակով բնակչության ծերացման ուսումնասիրությանն ու համեմատությանը, իսկ Ռոսեթի մեթոդը, մեր կարծիքով, թույլ է տալիս վերոնշյալ գործընթացն ուսումնասիրել ավելի խորությամբ, այդ թվում՝ տարածաշրջանային մակարդակով: Հետևաբար՝ սույն հետազոտության մեջ ծերացման գործընթացի համապարփակ ուսումնասիրության և վերլուծության համար օգտագործվել են և՛ ՄԱԿ-ի, և՛ Գարնյե-Ռոսեթի ժողովրդագրական ծերացման սանդղակները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

**Ժողովրդագրական ծերացման սանդղակները<sup>16</sup>**

Փուլեր	60 և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը (ըստ Ռոսեթի)	Բնակչության ծերացման մակարդակը և փուլերը	65 և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը (ըստ ՄԱԿ-ի)	Բնակչության ծերացման մակարդակը և փուլերը
1	8-ից ցածր	ժողովրդագրական երիտասարդություն	4-ից ցածր	երիտասարդ բնակչություն
2	8–10	ծերության առաջին շեմ	4–7	ծերացման շեմին գտնվող բնակչություն
3	10–12	ծերության շեմ	7-ից բարձր	ծերացող բնակչություն
4	12 և բարձր	ժողովրդագրական ծերություն		
	12–14	ժողովրդագրական ծերության առաջին մակարդակ		
	14–16	միջին		
	16–18	բարձր		
	18 և բարձր	շատ բարձր		

Ըստ Գարնյե-Ռոսեթի սանդղակի՝ ժողովրդագրական ծերացումը սկսվում է այն պահից, երբ 60 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը

<sup>15</sup> St'u **Барсуков В.Н.**, Демографическое старение населения: методы оценки. Вопросы территориального развития, 4(14), 2014 [Barsukov VN. Population ageing: assessment methods. Voprosy territorial'nogo razvitiya, 4(14), 2014 (In Russ.)]. URL: <http://vtr.isert-ran.ru/article/1404>

<sup>16</sup> St'u Народонаселение. Энциклопедический словарь. М.: БСЭ, 1994, էջ 112: О классификации населений по степени демографического старения см. **Россет Э.**, Процесс старения населения, М.: Статистика, 1968, էջ 68-72:


գերազանցում է բնակչության ընդհանուր թվի 12%-ը, իսկ համաձայն ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի՝ 7%-ը (65 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռն ընդհանուր բնակչության մեջ)<sup>17</sup>:

ՀՀ-ում ժողովրդագրական ծերացման մակարդակները, ծնելիության, մահացության և բնական հավելաճի ցուցանիշներն ուսումնասիրվել են հիմնականում 1990–2020 թթ. ժամանակահատվածի համար, իսկ ծերացման մակարդակն ըստ սեռի և մարզերի՝ 2001–2020 թթ., քանի որ մարզերի վերաբերյալ ելակետային տվյալները հասանելի են 2001 թ-ից:

Ժողովրդագրական ծերացման երկրորդ խմբի ցուցանիշներից են բնակչության միջին ու մեդիանական տարիքները: Միջազգային կազմակերպությունների կողմից առավել լայն կիրառություն է ստացել երկրորդ ցուցանիշը, քանի որ վերջինս ավելի կայուն է տվյալների շեղումներից: ՀՀ պաշտոնական վիճակագրությունում հաշվարկվում է միայն բնակչության միջին տարիքի ցուցանիշը: Սույն հետազոտության մեջ հաշվարկվել է ՀՀ բնակչության մեդիանական տարիքը (ինչպես ըստ հանրապետության, այնպես էլ ըստ մարզերի):

**Վերլուծություն:** Ըստ ՄԱԿ-ի սանդղակի՝ ՀՀ բնակչությունը 1993 թ-ից, իսկ ըստ Ռոստեթի՝ 1996 թ-ից համարվում է ծերացող, քանի որ բնակչության կառուցվածքում 65 (60) և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը համապատասխանաբար կազմել է 7.1% և 12.1%՝ գերազանցելով սահմանված շեմերը<sup>18</sup>:

ՀՀ-ում ժողովրդագրական ծերացման մակարդակը (ընդհանուր բնակչության մեջ 65 և բարձր տարիքի անձանց մասնաբաժինը) 1992 թ. համեմատությամբ տարեկան, միջին հաշվով, աճել է 2.3 տոկոսային կետով և 2020 թ. կազմել 12.6%, իսկ ըստ Ռոստեթի, ավելանալով 2.1 տոկոսային կետով, կազմել է 19.3% (գծապատկեր 1):



**Գծապատկեր 1. ՀՀ ժողովրդագրական ծերացման մակարդակները 1992–2020 թթ. (%)<sup>19</sup>**

<sup>17</sup> Տե՛ս United Nations. The ageing of populations and ist economic and social implications. N.Y., 1956, էջ 7:

<sup>18</sup> Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2001, ՀՀ ԱՎԾ, Եր., 2002, էջ 24-25:


<sup>19</sup> Կազմված է հեղինակների հաշվարկների հիման վրա՝ ըստ ՀՀ ՎԿ տվյալների բազայի:



Եթե 20-րդ դարի 90-ական թվականներին ՀՀ բնակչությունը համարվում էր ծերացող, ապա 2018 թ-ից կարելի է դասել ժողովրդագրական ծերացման շատ բարձր մակարդակ ունեցող երկրների շարքին (աղյուսակ 1):

Ժողովրդագրական անցման ընթացքում ծնելիության և մահացության անկումն այն երկու հիմնական «ուժերն» են, որոնք տարբեր ճանապարհներով հանգեցնում են բնակչության ծերացման: Մասնագիտական գրականության մեջ կիրառվում են ծերացման հետևյալ տեսակները. «ծերացում ներքևից»՝ պայմանավորված ծնելիության անկմամբ, «ծերացում վերևից»՝ պայմանավորված բնակչության թվաքանակում տարեցների մասնաբաժնի ավելացմամբ և երկարակեցությամբ<sup>20</sup>:

ՀՀ-ում ժողովրդագրական ծերացման հիմնական պատճառներից մեկը ծնելիության մակարդակի կտրուկ անկումն է: ՀՀ-ում 1990–2020 թթ. արձանագրվել է ծնունդների թվի նվազում: 1990 թ. ծնելիության ընդհանուր գործակիցը 22.5‰ է (79 882 ծնվածներ), իսկ 2000 թ., 1990 թ. համեմատությամբ, վերոնշյալ ցուցանիշը գրեթե կրկնակի կրճատվել է: 2020 թ., 1990 թ. համեմատությամբ, ծնվածների թիվը կրճատվելով 43 259-ով՝ կազմել է 12.3‰ (զճապատկեր 2):



**Գճապատկեր 2. ՀՀ բնակչության ծնելիության, մահացության և բնական հավելածի գործակիցների շարժընթացը 1990–2020 թթ. (‰)<sup>21</sup>**

Պետք է նշել, որ չնայած 1990–2019 թթ. մահացության մակարդակն աճել է 2.6 պրոմիլային կետով, այնուհանդերձ, այդ աճը պայմանավորված է եղել բացառապես 75 և բարձր տարիքային խմբի անձանց մահվան դեպքերով, իսկ 0–59 (ըստ Ռոսեթի) և 0–64 (ըստ ՄԱԿ-ի) տարիքային խմբերի անձանց մահվան դեպքերը նվազել կամ մնացել են անփոփոխ<sup>22</sup>: Այսպիսով՝ մահացության տարիքային գործակիցների ուսումնասիրության արդյունքները ևս փաստում են, որ ՀՀ-ում բնակչության ծերացման հիմնական պատճառներից մեկը ծնելիության անկումն է:

Ժողովրդագրական ծերացման գործընթացի վրա կարևոր ազդեցություն

<sup>20</sup> Ст'и Пирожков С.И., Демографическое старение / Народонаселение, Энциклопедический словарь. М.: БРЭ, 1994, էջ 112:

<sup>21</sup> Կազմված է ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա, <https://armstat.am/am/?nid=14>

<sup>22</sup> Հաշվարկները կատարել են հեղինակները՝ ըստ ՀՀ ՎԿ տվյալների:

ունի բնակչության երկարակեցությունը՝ հաշվի առնելով կյանքի սպասվող տևողությունը: Եթե 1990 թ. ՀՀ-ում կյանքի սպասվող տևողությունը (ծննդյան պահից) 71.8 տարի էր, ապա 2019 թ.՝ 76.3 տարի (յուրաքանչյուր տարի ավելացել է 0.3–0.5 տարով)<sup>23</sup>:

Վերջին 30 տարիներին արտագաղթի հետևանքով նվազել է ոչ միայն բնակչության թիվը, այլև փոխվել է սեռատարիքային կազմը, նվազել է ծնելիությունը, ծերացել է բնակչությունը:

Այսպես՝ 1990–2020 թթ. ՀՀ բնակչության թիվը նվազել է 551.6 հազ. մարդով կամ 15.7%-ով, ընդ որում, նվազումը պայմանավորված է եղել բացառապես միգրացիայի բացասական մնացորդով, ինչը դիտարկվող ժամանակաշրջանում կազմել է 1109.3 հազ. մարդ կամ տարեկան, միջին հաշվով, արտաքին միգրացիոն շարժի հետևանքով արտերկրում են մնացել շուրջ 37.0 հազար ՀՀ քաղաքացի: Դիտարկվող ժամանակաշրջանում արտագաղթը մեծ ազդեցություն է ունեցել բնակչության ծերացման վրա, մասնավորապես՝ 2012–2019 թթ. ՀՀ միգրացիայի բացասական մնացորդը կազմել է 163 964 մարդ, որի շուրջ 91%-ը կամ 150 980 մարդ ցուցանիշը վերաբերում է 15-59 տարիքային խմբին: Ընդ որում, արտագաղթածների ավելի քան 65%-ը կազմել են վերարտադրողական և աշխատանքային տարիքի քաղաքացիները (20–49 տարիքային խումբ), ինչն էապես ազդել է ոչ միայն ժողովրդագրական ծերացման, այլ նաև բնակչության տարիքային կառուցվածքի տեղաշարժերի (երիտասարդներից դեպի տարեցներ) և ծնելիության մակարդակի նվազման վրա<sup>24</sup>:


2020 թ. ՀՀ ժողովրդագրական ծերացման ցուցանիշների մակարդակը բարձր է եղել աշխարհի միջին ցուցանիշներից: Մասնավորապես՝ 2020 թ. ՀՀ ժողովրդագրական ծերացման մակարդակն աշխարհի միջին ցուցանիշը գերազանցել է 3.3 տոկոսային կետով, ամենացածր ցուցանիշ ունեցող երկրին՝ ԱՄԷ-ին (1.3%)՝ 11.3 տոկոսային կետով, իսկ ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրին՝ Ճապոնիային (28.4%) զիջել է 15.8 տոկոսային կետով: Վերոնշյալ ցուցանիշով Հայաստանն աշխարհի 187 երկրների մեջ զբաղեցնում է 63-րդ տեղադիրքը՝ գերազանցելով հարևան բոլոր երկրներին (Ադրբեջան, Թուրքիա և Իրան), բացի Վրաստանից<sup>25</sup>:

ՀՀ-ում ժողովրդագրական ծերացման մակարդակն ըստ սեռի դիտարկելիս (գծապատկեր 3) ակնհայտ է դառնում, որ ծերացման մակարդակը բարձր է կանանց շրջանում, մասնավորապես՝ 2001 թ. կանանց ծերացման մակարդակը կազմել է 11.1%, որն աճել է 3.4 տոկոսային կետով և 2020 թ. հասել 14.5%-ի (բարձր է հանրապետական միջին մակարդակից 1.9 տոկոսային կետով, իսկ տղամարդկանց ծերացման մակարդակից՝ 4.1 տոկոսային կետով): Ընդ որում, 2001–2020 թթ. կանանց ծերացման մակարդակն աճել է ավելի արագ տեմպերով, քան տղամարդկանցը:

<sup>23</sup> Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու - 2020, ՀՀ ՎԿ, Եր., 2020, էջ 84:

<sup>24</sup> Հաշվարկները կատարել են հեղինակները՝ ըստ ՀՀ ՎԿ տվյալների:

<sup>25</sup> Տե՛ս <https://data.worldbank.org/indicator/SP.POP.65UP.TO.ZS?view=chart>



**Գծապատկեր 3. ՀՀ ժողովրդագրական ծերացման մակարդակն (65 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռն ընդհանուր բնակչության մեջ) ըստ սեռի, 2001–2020 թթ. (%)<sup>26</sup>**

ՀՀ-ում կանանց շրջանում ծերացման բարձր աստիճանը պայմանավորված է առանձին տարիքային խմբերում կանանց մահացության ցածր մակարդակով և բարձր տարիքային խմբերի (60 և բարձր) մեծ մասնաբաժնով, մասնավորապես՝ գրեթե բոլոր տարիներին 60–79 տարիքային խմբի մահվան դեպքերի շուրջ 55–62%-ը բաժին է ընկել տղամարդկանց, իսկ 60 և բարձր տարիքի անձանց մեջ կանանց մասնաբաժինը մշտապես տատանվել է 59–61 տոկոսային միջակայքում<sup>27</sup>: Անհրաժեշտ է նշել, որ կանանց կյանքի սպասվող տևողությունը (ծննդյան պահից) դիտարկվող բոլոր տարիներին առնվազն 6 տարով միշտ բարձր է տղամարդկանց համանման ցուցանիշից:

Ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի՝ ժողովրդագրական ծերացման աստիճանը տարբերվում է աճի տեմպերով (աղյուսակ 2): 2001–2020 թթ. ինչպես Երևանի, այնպես էլ բոլոր մարզերի ժողովրդագրական ծերացման մակարդակները բարձրացել են, ընդ որում, ամենամեծ աճն արձանագրվել է Երևանում և Սյունիքի մարզում. ըստ Ռոստեթի սանդղակի համապատասխանաբար ավելանալով 6.6 և 6.0 տոկոսային կետով՝ կազմել են 21,3% և 20,9%, իսկ ամենացածրը՝ Արագածոտնի մարզում՝ 2.3 տոկոսային կետով:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի բոլոր տարիներին ժողովրդագրական ծերացման մակարդակը (ըստ ՄԱԿ-ի և Ռոստեթի սանդղակների) բարձր է եղել Լոռու, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում, ինչպես նաև Երևանում՝ հանրապետական միջին ցուցանիշը գերազանցելով 1.1–2.1 տոկոսային կետով, իսկ Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Շիրակի մարզերը նշված ցուցանիշով ցածր են եղել հանրապետական միջինից 0.9–2.6 տոկոսային կետով (աղյուսակ 2):

<sup>26</sup> Կազմել են հեղինակները՝ ըստ ՀՀ ՎԿ տվյալների:  
<sup>27</sup> Հաշվարկել են հեղինակները՝ ըստ ՀՀ ՎԿ տվյալների:

Աղյուսակ 2

ՀՀ ժողովրդագրական ծերացման մակարդակներն ըստ Երևանի և ՀՀ մարզերի 2001–2020 թթ. (%)<sup>28</sup>

	ՀՀ	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
2020	12.6 (19.3)	14.7 (21.3)	10.3 (16.5)	10.5 (17.4)	10.0 (16.8)	10.0 (16.2)	13.2 (20.2)	10.6 (17.5)	11.5 (18.4)	13.7 (20.9)	12.8 (20.4)	14.3 (21.1)
2019	12.3 (18.8)	14.5 (20.9)	10.1 (16.0)	10.2 (16.7)	9.8 (16.2)	9.8 (15.6)	13.0 (19.8)	10.3 (16.9)	11.3 (17.8)	13.2 (20.1)	12.6 (19.6)	14.0 (20.5)
2018	11.9 (18.1)	14.0 (20.3)	9.8 (15.3)	9.8 (15.9)	9.4 (15.3)	9.4 (14.9)	12.7 (19.1)	9.9 (16.2)	11.0 (17.2)	12.6 (19.3)	12.1 (18.7)	13.7 (19.9)
2015	10.9 (16.2)	12.7 (18.5)	9.3 (13.7)	9.1 (14.0)	8.7 (13.4)	8.7 (13.1)	12.1 (17.5)	9.0 (14.2)	10.1 (15.3)	11.5 (17.0)	11.1 (16.4)	13.0 (18.2)
2014	10.7 (15.7)	12.4 (18.0)	9.3 (13.3)	8.9 (13.5)	8.5 (13.0)	8.6 (12.7)	11.9 (17.1)	8.9 (13.7)	10.0 (14.8)	11.3 (16.4)	11.1 (16.0)	13.0 (17.9)
2011	10.5 (14.7)	11.6 (16.8)	9.5 (12.8)	9.0 (12.5)	8.7 (12.1)	8.6 (11.9)	12.1 (16.3)	8.8 (12.7)	10.0 (14.0)	10.9 (15.1)	11.0 (14.9)	12.9 (17.2)
2001	9.8 (14.3)	9.7 (14.7)	10.0 (14.2)	9.5 (13.4)	8.8 (12.8)	9.2 (13.2)	11.1 (16.0)	8.1 (12.1)	9.4 (13.9)	10.4 (14.9)	11.7 (15.8)	13.3 (18.3)
<b>2020/2001 թթ. ծերացման գործակիցների փարբերությունը (տոկոսային կերպ)</b>												
<b>Ըստ ՄԱԿ-ի</b>	2.8	5.0	0.3	1.0	1.2	0.8	2.1	2.5	2.1	3.3	1.1	1.0
<b>Ըստ Ռոստ-թի</b>	5.0	6.6	2.3	4.0	4.0	3.0	4.2	5.4	4.5	6.0	4.6	2.8

Ժողովրդագրական ծերացման հանրապետական միջին ցուցանիշից բարձր մակարդակ արձանագրած մարզերում բնակչության ծերացումը պայմանավորված է եղել ինչպես ծնելիության ցածր մակարդակով, այնպես էլ աշխատունակ տարիքի անձանց միգրացիայի բացասական մնացորդի բարձր ցուցանիշով: 2000–2010 թթ. նշված մարզերում ծնունդների թիվն ավելացել, այնուհետև բարձր տեմպերով նվազել է, իսկ արտագաղթածների 90–92%-ը կազմել են 0–59 տարիքի անձինք: Ինչ վերաբերում է Երևան քաղաքում բնակչության ծերացմանը, ապա դրա հիմնական պատճառն արտագաղթն է: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2012–2020 թթ. Երևան քաղաքից և Լոռու մարզից արտագաղթել են 0–59 տարիքի համապատասխանաբար՝ 23 507 և 22 413 ՀՀ քաղաքացիներ, ինչն այդ տարիքային խմբի արտագաղթածների համապատասխանաբար՝ 15.6% և 14.8%-ն է կազմում:

ՀՀ մնացած մարզերում ժողովրդագրական ծերացման համեմատաբար ցածր աստիճանը պայմանավորված է եղել հիմնականում տղամարդկանց ծերացման ցածր մակարդակով: Ավելին, մինչև 2011 թ. այդ մարզերում, ըստ տղամարդկանց ցուցանիշի (Ռոստթի սանդղակով), բնակչությունը գտնվել է ծերացման շեմին:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ ծնելիության խթանման ուղղությամբ իրականացվող միջոցառումները չեն ապահովել սպասված արդյուն-

<sup>28</sup> Հաշվարկել են հեղինակները՝ ըստ ՀՀ ՎԿ տվյալների:


քը, ուստի անհրաժեշտություն է առաջանում մշակելու ծնելիության խթանման նոր մոդել:

Քանի որ ժողովրդագրական ծերացումը միջազգային կազմակերպությունների կողմից չափվում է բնակչության մեդիանական տարիքի միջոցով, հաշվարկել ենք ՀՀ բնակչության մեդիանական տարիքի ցուցանիշը (ըստ սեռի, ինչպես նաև հանրապետական և մարզային կտրվածքով):

1970–2020 թթ. ՀՀ բնակչության մեդիանական տարիքը բարձր է եղել աշխարհի միջին և ցածր եկամուտներ ունեցող երկրների միջին ցուցանիշներից, սակայն ցածր է Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի և բարձր եկամուտ ունեցող այլ երկրների միջին ցուցանիշից: ՄԱԿ-ի տվյալները փաստում են, որ վերջին տասնամյակների ընթացքում աշխարհի բնակչության մեդիանական տարիքը բարձրացել է (յուրաքանչյուր 5 տարվա հաշվով ավելացել է շուրջ 1 տարով՝ ըստ միջին հաշվարկների): Եթե 1970 թ. աշխարհի բնակչության կեսը 22 տարեկանից ցածր տարիքի էր, ապա 2020 թ. մեդիանական տարիքն արդեն հասել է 31-ի: Ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների՝ այս միտումը կպահպանվի առաջիկա 50 տարիների ընթացքում, և 21-րդ դարի 2-րդ կեսին աշխարհի բնակչության 50%-ը կլինի 40 տարեկանից բարձր տարիքի<sup>29</sup>:

Վերջին 30 տարվա ընթացքում ՀՀ բնակչության մեդիանական տարիքը բարձրանալով 8.9 տարով (տարեկան միջին հաշվով 0.3 տարի)՝ 2020 թ. կազմել է 36.1 տարի: Ընդ որում, 1990–2000 թթ. ընթացքում մեդիանական տարիքը բարձրացել է 3.4 տարով, իսկ 2000–2010 թթ. և 2010–2020 թթ. ժամանակահատվածներում համապատասխանաբար՝ 2.5 և 3.0 տարով: Նշված ցուցանիշով ՀՀ-ն աշխարհի 189 երկրների շարքում 2000 թ. զբաղեցրել է 51-րդ տեղադիրքը, 2010 թ.՝ 60-րդը, իսկ 2020 թ.՝ 65-րդը<sup>30</sup>:

2010–2020 թթ. կանանց մեդիանական տարիքը բարձր է եղել ինչպես ամբողջ բնակչության, այնպես էլ տղամարդկանց մեդիանական տարիքից (գծապատկեր 4): Նշյալ ժամանակահատվածում կանանց մեդիանական տարիքը բարձրացել է 3.1 տարով, իսկ տղամարդկանցը՝ 2.9 տարով:



**Գծապատկեր 4. ՀՀ բնակչության մեդիանական տարիքի շարժընթացն ըստ սեռի 2010–2020 թթ.<sup>31</sup>**

<sup>29</sup> Տե՛ս ՄԱԿ-ի բնակչության մեդիանական տարիքի տվյալների բազա:

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>31</sup> Կազմվել է հեղինակների հաշվարկների հիման վրա:

Պետք է նշել, որ 2010–2020 թթ. բնակչության մեղիանական տարիքն ավելացել է Երևան քաղաքում և ՀՀ բոլոր մարզերում, սակայն առավել արագ աճի միտումներ արձանագրվել են վերջին 5 տարիների ընթացքում (աղյուսակ 3), ընդ որում՝ Երևանում, Լոռու և Շիրակի մարզերում մեղիանական տարիքի աճը կազմել է մինչև 3 տարի, Արագածոտնի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում՝ 3–3.5 տարի, իսկ մնացած մարզերում՝ 3.5 և ավելի տարի: Դիտարկվող բոլոր տարիներին Երևան քաղաքի, Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերում բնակչության մեղիանական տարիքը բարձր է եղել հանրապետական միջին մակարդակից: Հատկանշական է, որ Վայոց ձորի մարզում նշված ցուցանիշը 2010 թ. հանրապետական միջին մակարդակից ցածր էր, սակայն աճի առաջանցիկ տեմպերի շնորհիվ արդեն 2020 թ. հավասարվել է հանրապետական միջինին:

Աղյուսակ 3


**ՀՀ բնակչության մեղիանական տարիքի շարժընթացը Երևանում և ՀՀ մարզերում 2010-2020 թթ.՝ ըստ տարիների<sup>32</sup>**

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2020/ 2010	2020/ 2015	2015/ 2010
<b>Հայաստան</b>	33.1	33.2	33.4	33.7	34.0	34.3	34.6	35.0	35.4	35.8	36.1	3.0	1.9	1.1
<b>Երևան</b>	34.9	34.9	35.1	35.3	35.6	35.8	36.2	36.6	37.0	37.4	37.6	2.7	1.7	1.0
<b>Արագածոտն</b>	31.3	31.3	31.5	31.7	32.0	32.4	32.7	33.1	33.5	34.0	34.4	3.1	2.0	1.1
<b>Արարատ</b>	31.3	31.3	31.6	32.0	32.3	32.6	31.8	33.4	33.9	34.3	34.8	3.6	2.2	1.4
<b>Արմավիր</b>	31.2	31.3	31.6	32.0	32.3	32.7	33.1	33.6	34.0	34.5	35.0	3.8	2.3	1.5
<b>Գեղարքունիք</b>	30.7	30.7	31.1	31.4	31.8	32.2	32.6	33.1	33.6	34.1	34.6	3.9	2.3	1.6
<b>Լոռի</b>	34.0	34.0	34.1	34.3	34.5	34.6	34.8	35.0	35.3	35.6	35.9	1.9	1.3	0.6
<b>Կոտայք</b>	31.7	31.8	32.0	32.3	32.7	33.0	33.4	33.8	34.3	34.7	35.1	3.5	2.1	1.4
<b>Շիրակ</b>	32.6	32.6	32.7	32.9	33.1	33.3	33.6	33.9	34.3	34.7	35.0	2.5	1.7	0.8
<b>Սյունիք</b>	33.8	33.8	34.2	34.5	35.0	35.4	35.8	36.4	36.9	37.2	37.7	3.9	2.3	1.6
<b>Վայոց ձոր</b>	32.1	32.9	33.2	33.4	33.7	33.9	34.3	34.6	35.1	35.6	36.1	3.2	2.2	1.0
<b>Տավուշ</b>	33.8	33.9	34.3	34.7	35.0	35.2	35.6	35.9	36.3	36.7	37.1	3.3	1.9	1.3

Ժողովրդագրական ծերացման գործընթացները և հասարակական կյանքի տարբեր կողմեր փոխկապված են (գծապատկեր 5): Վերլուծության արդյունքները թույլ են տալիս առանձնացնել բնակչության ծերացման երեք մակարդակ. միկրո (անհատական ծերացում), մեզո (տնային տնտեսությունների և ընտանիքների ծերացում) և մակրո (բնակչության ծերացում): Առանձնացված յուրաքանչյուր մակարդակում ժողովրդագրական ծերացման հետևանքներն ուղղակի ազդեցություն են ունենում հասարակության կենսագործունեության առանձին ոլորտների վրա: Կյանքի սպասվող տևողության մեծացումը (անհատական ծերացում) հանգեցնում է բնակչության մեջ տարեց անձանց մասնաբաժնի աճի (ժողովրդագրական տեսանկյուն), ինչի հետևանքով ավելանում է աշխատունակ տարիքի բնակչության (տնտեսական ծանրաբեռնվածություն), ինչպես նաև առողջապահական կազմակերպությունների և սոցիալական պաշտպանության համակարգի ծանրաբեռնվածությունը (սոցիալական տեսանկյուն): Մեզոմակարդակում տնտեսական տեսանկյունը հանդես է գալիս ծերացող տնային տնտեսությունների սպառո-

<sup>32</sup> Կազմվել է հեղինակների հաշվարկների հիման վրա:

ղական վարքագծի փոփոխությամբ: Վերջինիս, որպես կանոն, հետևում է համախառն պահանջարկի նվազումը, տնտեսական աճի դանդաղումը: Ժողովրդագրական և սոցիալական տեսանկյուններն արտահայտվում են ընտանեկան դրությամբ (ընտանիքներում երեխաների թվի նվազում ու ծնողների միջին տարիքի աճ) և արժեքային համակարգով: Մակրոմակարդակը բնութագրվում է պետական բյուջեի և կենսաթոշակային համակարգի ծանրաբեռնվածության ավելացմամբ (տնտեսական տեսանկյուն), ինչպես նաև տարեց անձանց նկատմամբ քաղաքականության փոփոխությամբ (սոցիալական և ժողովրդագրական տեսանկյուններ):



**Գծապատկեր 5. Ժողովրդագրական ծերացում. գործոններ և հետևանքներ<sup>33</sup>**

Այսպիսով՝ հետազոտության արդյունքում բնակչության ծերացման հետևանքները կարելի է ներկայացնել հետևյալ երեք հիմնական խմբերով (աղյուսակ 4)՝ ժողովրդագրական (բնակչության տարիքային կառուցվածքի և վերարտադրության տեսակի փոփոխություն), տնտեսական (աշխատանքի շուկայի փոխակերպում, կենսաթոշակային ծանրաբեռնվածության ավելացում և այլն) և սոցիալական (առողջապահական ու սոցիալական պաշտպանության բյուջետային ծախսերի աճ, սոցիալական ենթակառուցվածքների վրա սոցիալական ծանրաբեռնվածության ավելացում և այլն):

<sup>33</sup> Կազմվել է ըստ հեղինակների հետազոտության արդյունքների:

Աղյուսակ 4

**Ժողովրդագրական ծերացման հետևանքները<sup>34</sup>**

Հետևանքների բնույթը	Հետևանքների բովանդակությունը
Ժողովրդագրական տեսանկյուն	<ul style="list-style-type: none"> <li>• բնակչության սեռատարիքային կազմի վատթարացում</li> <li>• բնակչության ծնելիության գործընթացի զարգացման համար ավելի նեղ հեռանկարային հենքի ձևավորում</li> <li>• բնակչության մահացության գործընթացի զարգացման համար ավելի լայն հեռանկարային հենքի ձևավորում</li> <li>• բնակչության վերարտադրության փոխակերպում դեպի սերունդների ավելի նեղ (սահմանափակ) փոխարինման կողմը և այլն</li> </ul>
Տնտեսական տեսանկյուն	<ul style="list-style-type: none"> <li>• երկրի աշխատանքային ռեսուրսների հավելանքի կրճատում և աշխատանքի փոխարինման գործընթացի վատթարացում</li> <li>• զբաղված բնակչության միջին տարիքի ավելացում</li> <li>• աշխատունակ տարիքի և աշխատող բնակչության ծանրաբեռնվածության (խնամատության) ավելացում՝ ի հաշիվ տարեց անձանց</li> </ul>
Սոցիալական տեսանկյուն	<ul style="list-style-type: none"> <li>• հասարակության կողմից աջակցության կարիք ունեցող տարեց բնակչության թվի աճ</li> <li>• տարեց անձանց սոցիալական պաշտպանության վրա կատարվող բյուջետային ծախսերի կայուն աճ</li> <li>• երկրի սոցիալական ենթակառուցվածքների վրա ծանրաբեռնվածության ավելացում՝ ծերացող հասարակությանը զուգընթաց</li> <li>• սոցիալ-տնտեսական քաղաքականության ուղղությամբ մշակված միջոցառումների բարելավում և մշտադիտարկում՝ համապատասխանեցնելով միջազգայնորեն ընդունված արժանապայել կենսապայմաններ ունենալու տարեցների իրավունքին</li> </ul>

Վերոնշյալ ուսումնասիրությունից հետևում է, որ «ծերացող» երկրների կառավարությունները սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ պետք է հաշվի առնեն թվարկված երեք տեսանկյունները՝ օգտագործելով կանխատեսման մեթոդներ: Բնակչության ծերացման անշրջելիությունը, ինչպես նաև դրա իներցիոն բաղադրիչը, հնարավորություն կընձեռեն կատարելու բավականին իրատեսական կանխատեսումներ (թե՛ կարճաժամկետ, թե՛ միջնաժամկետ հեռանկարի համար):

**Եզրակացություններ:** Ժողովրդագրական գործընթացների փոփոխությունները նոր մարտահրավերներ են ծնել և՛ զարգացած, և՛ զարգացող երկրների, այդ թվում՝ ՀՀ-ի համար:

Մեր հանրապետությունը (ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի՝ 1993 թ-ից, իսկ ըստ Ռոստեթի՝ 1996 թ-ից) 20-րդ դարի վերջից համարվել է ծերացող, քանի որ բնակչության կառուցվածքում 65 (60) և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը գերազանցել է ծերացման սանդղակով սահմանված շեմերը: Ըստ ՄԱԿ-ի՝ ՀՀ-ում 2020 թ. ծերացման մակարդակը կազմել է 12.6%, իսկ ըստ Ռոստեթի՝ 19.3%: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ 2018 թ-ից Հայաստանը դասվում է ծերացման բարձր մակարդակ ունեցող երկրների շարքին (ըստ Ռոստեթի սանդղակի):

<sup>34</sup> Կազմվել է ըստ հեղինակների հետազոտության արդյունքների:



Գլոբալ մակարդակով բնակչության ծերացման տեղադիրքերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2020 թ. ծերացման ցուցանիշով ՀՀ-ն աշխարհի 187 երկրների մեջ զբաղեցրել է 63-րդ տեղադիրքը, իսկ սահմանակից երկրներից միայն Վրաստանն է, որ ծերացման ցուցանիշով գերազանցել է Հայաստանին:

Այսպիսով՝ մասնագիտական գրականության ուսումնասիրությունը և ՀՀ ժողովրդագրական գործընթացները բնութագրող ցուցանիշների վերլուծությունը թույլ են տալիս առանձնացնել ժողովրդագրական ծերացման հետևյալ հիմնական բնութագրերը.

- համընդհանրություն. աշխարհի և դրա առանձին տարածաշրջանների բնակչությունը դառնում է ծեր,
- անշրջելիություն. նեղացող վերարտադրության և կյանքի սպասվող միջին տևողության մեծացումը երկրներում (մարզերում) հանգեցնում է բնակչության ծերացման,
- հետևանքների բազմազանություն. ժողովրդագրական ծերացումը համակարգային երևույթ է, որն անհատի, տնային տնտեսության և ամբողջ բնակչության մակարդակով շոշափում է կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները:

ՀՀ-ում ժողովրդագրական ծերացման գործընթացի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ բնակչության ծերացման գլխավոր պատճառներից մեկը ծնելիության մակարդակի անկումն է: Եթե 1990 թ. ծնելիության ընդհանուր գործակիցը 22.5% էր, ապա ներկայումս այդ ցուցանիշը կրճատվել է շուրջ երկու անգամ՝ 2020 թ. կազմելով 12.3%: Չնայած հանրապետությունում 1990–2019 թթ. մահացության մակարդակն աճել է 2.6 պրոմիլային կետով, սակայն այդ աճը բացառապես պայմանավորված է եղել 75 և բարձր տարիքային խմբի անձանց մահվան դեպքերով: Բացի այդ, կարող ենք արձանագրել, որ բնակչության ծերացման վրա նշանակալի ազդեցություն է ունեցել միգրացիայի բացասական մնացորդը, որը 2012–2019 թթ. կազմել է 163 964 մարդ, ընդ որում՝ շուրջ 91%-ը բաժին է ընկել 15-59 տարիքային խմբին:

ՀՀ-ում ժողովրդագրական ծերացման մակարդակն ըստ սեռի դիտարկելիս պարզվեց, որ ծերացման մակարդակը բարձր է կանանց շրջանում: 2020 թ. կանանց ծերացման մակարդակը կազմել է 14.5% (հանրապետական միջին մակարդակից բարձր է 1.9 տոկոսային կետով, իսկ տղամարդկանց ծերացման մակարդակից՝ 4.1 տոկոսային կետով):

Ժողովրդագրական ծերացման մակարդակն ըստ մարզերի վերլուծելիս ակնհայտ է դառնում, որ ուսումնասիրված ժամանակահատվածում ժողովրդագրական ծերացման մակարդակը (ըստ ՄԱԿ-ի և Ռոստեի սանդղակների) բարձր է եղել Լոռու, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում, ինչպես նաև Երևանում: Կարելի է արձանագրել, որ ծերացման բարձր մակարդակ ունեցող մարզերում ծերացման հիմնական պատճառներն են ծնելիության ցածր մակարդակը և աշխատունակ տարիքի անձանց միգրացիայի բացասական մնացորդի բարձր ցուցանիշը: Վերոնշյալի համատեքստում, առաջարկվում է մշակել ծնելիության խթանման նոր մոդել (հաշվի առնելով նաև մարզային առանձնահատկությունները), քանի որ նախկինում մշակված և իրագործված ծրագրերն, ըստ էության, չեն ապահովել ցանկալի արդյունք: Բացի այդ, ակնհայտ է դառնում, որ արտագաղթի կանխարգելման ուղղու-

թյամբ իրականացվող միջոցառումները ևս ձախողված են. արտագաղթածների ավելի քան 65%-ը վերարտադրողական և աշխատանքային տարիքի քաղաքացիներն են: Հետևաբար՝ միգրացիայի կանխարգելման ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը ևս կարիք ունի վերափոխման:

ՀՀ-ում մեդիանական տարիքի հաշվարկները ցույց են տվել, որ վերջին 30 տարվա ընթացքում բնակչության մեդիանական տարիքը բարձրացել է 8.9 տարով և 2020 թ. կազմել 36.1 տարի: Բացի այդ, 2010–2020 թթ. բնակչության մեդիանական տարիքը բարձրացել է Երևան քաղաքում և ՀՀ բոլոր մարզերում (վերջին 5 տարիների ընթացքում ավելի արագ):

Ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ ՀՀ-ում ժողովրդագրական ծերացման գործընթացը շարունակում է ունենալ աճի միտում՝ առաջացնելով ազգային անվտանգության սուր հիմնախնդիրներ: Հետևաբար՝ ծերացման հետևանքների մեղմման նպատակով քաղաքականություն մշակելիս պետք է հաշվի առնել ժողովրդագրական, տնտեսական և սոցիալական տեսանկյունները:

### Օգտագործված գրականություն

1. Հախվերդյան Դ., Փախլյան Ա., Համաշխարհային տնտեսության ժողովրդագրական հիմքերը. գլոբալ ծերացում, «21-րդ ԴԱԲ», 6 (58), 2014, [http://www.noravank.am/upload/pdf/7.David\\_Hakhverdyan\\_Anna\\_Pakhlyan\\_21\\_DAR\\_06\\_2014.pdf](http://www.noravank.am/upload/pdf/7.David_Hakhverdyan_Anna_Pakhlyan_21_DAR_06_2014.pdf)
2. Ֆահրադյան Մ., Ժողովրդագրական անվտանգության գնահատման վիճակագրական ցուցանիշների համակարգը և դրա կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, «Բանբեր ՀՊՏՀ», 3, 2017, [https://asue.am/upload/files/science/banber/2017-year-3/10-B\\_2017.3-9.pdf](https://asue.am/upload/files/science/banber/2017-year-3/10-B_2017.3-9.pdf)
3. Խոջաբեկյան Վ., Գալստյան Ա., Փափազյան Խ., Պետրոսյան Մ., Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում, «21-րդ ԴԱԲ», 2 (16), 2007:
4. ՀՀ ժողովրդագրական ժողովածու - 2020, ՀՀ ԱՎԾ, Եր., 2020:
5. ՀՀ ժողովրդագրական ժողովածու - 2017, ՀՀ ԱՎԾ, Եր., 2017:
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2001, ՀՀ ԱՎԾ, Եր., 2002:
7. Барсуков В.Н., Демографическое старение населения: методы оценки. Вопросы территориального развития, 4(14), 2014 [Barsukov VN. Population ageing: assessment methods. Voprosy territorial'nogo razvitiya, 4(14), 2014 (In Russ.)]. URL: <http://vtr.isert-ran.ru/article/1404>.
8. Блум Д., Демографические потрясения. Финансы и развитие, Март, 2016, <https://www.imf.org/external/russian/pubs/ft/fandd/2016/03/pdf/bloom.pdf>
9. Народонаселение. Энциклопедический словарь. М.: БСЭ, 1994.
10. Россет Э., Процесс старения населения, М.: Статистика, 1968.
11. Пирожков С.И., Демографическое старение / Народонаселение. Энциклопедический словарь. М.: БРЭ, 1994.

12. Marois G., Bélanger A. and Lutz W., Population aging, migration, and productivity in Europe, *Proc Natl Acad Sci U S A.* 2020 Apr 7; 117(14): 7539–7541. Published online 2020 Apr 7.  
doi: 10.1073/iti1420117  
[www.pnas.org/cgi/doi/10.1073/pnas.1918988117](http://www.pnas.org/cgi/doi/10.1073/pnas.1918988117)
13. Bavel J. Van, The world population explosion: causes, backgrounds and projections for the future, *Facts Views Vis Obgyn.* 2013,  
<https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3987379/>
14. Lutz W., Sanderson W., Scherbov S., Global and regional population ageing: How certain are we of its dimensions? *Population Ageing*, 1, 2008.
15. Figliuoli L., Flamini V., Mowatt R. and others; Growing pains: Is Latin America prepared for population aging, *International Monetary Fund* 2018, <https://www.imf.org/en/Publications/Departmental-Papers-Policy-Papers/Issues/2018/04/16/Growing-Pains-Is-Latin-American-Prepared-for-Population-Aging-45382>
16. Gietel-Basten S., Giorguli Saucedo S., Scherbov S.; Prospective measures of aging for Central and South America, Citation: Gietel-Basten S., Saucedo SEG, Scherbov S., Prospective measures of aging for Central and South America. *PLoS ONE* 15(7), 2020, e0236280. <https://doi.org/10.1371/journal.pone.0236280>
17. United Nations. The ageing of populations and ist economic and social implications. N.Y., 1956.
18. World Population Ageing 2019 Highlights, UN, New York 2020.
19. World Economic and Social Survey 2007, Development in an Ageing World, United Nations 2007.
20. [https://countrymeters.info/ru/World#death\\_clock](https://countrymeters.info/ru/World#death_clock)
21. <https://data.worldbank.org/indicator/SP.POP.65UP.TO.ZS?view=chart>
22. <https://population.un.org/wpp/DataQuery/>

**МАНУК МОВСИСЯН**

*Декан факультета управления (менеджмента) АГЭУ,  
кандидат экономических наук, доцент*

**РУБЕН КАНТАРЧЯН**

*Доцент кафедры макроэкономики АГЭУ,  
кандидат экономических наук*

**НАРЕК КЕСОЯН**

*Декан факультета маркетинга и организации бизнеса АГЭУ,  
кандидат экономических наук, доцент*

**ЛУСИНЕ КАРАПЕТАН**

*Доцент кафедры делового (бизнес) администрирования АГЭУ,  
кандидат экономических наук*

**ТАЧАТ ПАПОЯН**

*Магистрант кафедры статистики АГЭУ*

**ГОР АРУТЮНЯН**

*Магистрант кафедры экономической информатики и  
информационных систем АГЭУ*

***Актуальные проблемы старения населения Республики Армения в контексте изменения демографических процессов.*** – Демографическое старение в Армении началось

в конце 20-го века и продолжает проявлять тенденцию к росту. С 2018 года Армения входит в число стран с очень высоким уровнем демографического старения. Исследования зарубежных и отечественных ученых, а также авторов данной статьи показали, что высокий уровень демографического старения также создает проблемы для национальной безопасности. Кроме того, процесс старения оказывает значительное влияние на ряд экономических и социальных сфер. В этом контексте, в статье анализируются изменения в демографических процессах Республики Армения, текущее состояние старения населения, выявляются факторы, влияющие на него, а также обсуждаются последствия старения. Результаты исследования показывают, что основной причиной демографического старения в Армении стало не только снижение уровня рождаемости, но и масштабная эмиграция.

**Ключевые слова:** демографические процессы, снижение рождаемости, коэффициент общей смертности, эмиграция, старение, изменение возрастной структуры, медианный возраст населения.

JEL: J11, R23

DOI: 10.52174/1829-0280\_2021\_4\_95

**MANUK MOVSISYAN**

*Dean of the Department of Management of ASUE,  
PhD in Economics, Associate Professor*

**RUBEN GHANTARCHYAN**

*Associate Professor of the Chair of Macroeconomics of ASUE,  
PhD in Economics*

**NAREK KESOYAN**

*Dean of the Department of Marketing and Business Organization of ASUE,  
PhD in Economics, Associate Professor*

**LUSINE KARAPETYAN**

*Associate Professor of the Chair of Business Administration of ASUE,  
PhD in Economics*

**TATSHAT PAPOYAN**

*Master's Student of the Chair of Statistics of ASUE*

**GOR HARUTYUNYAN**

*Master's Student of the Chair of Economic Computer Science and  
Information Systems of ASUE*

***Population Aging Issues of the Republic of Armenia in the Context of Demographic Processes Change.***– The phenomenon of demographic aging in Armenia started at the end of the 20th century and continues to grow. Since 2018, Armenia has been classified as one of the countries with a very high level of demographic aging. Studies have shown that a high level of demographic aging also causes national security issues. In addition, the aging process has a significant impact on a number of economic and social areas. The paper analyzed the changes in the demographic processes of the Republic of Armenia, the current state of the population aging, revealed the factors influencing it and also discussed aging consequences. The results of the research show that the main reason for the demographic aging in Armenia was not only the decrease in birth rate, but also the large-scale emigration.

**Key words:** *demographic processes, declining birth rate, crude death rate, emigration, aging, change in age structure, median age of population.*

JEL: J11, R23

DOI: 10.52174/1829-0280\_2021\_4\_95